ԿՈՉԵՐ ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆԸ

Ռուսաստանում բռնկված առաջին բուրժուական հեղափոխությունը իր հետ բերեց նաեւ արհավիրքներ: Դրանցից էին ազգամիջյան ընդհարումները, որոնք իրենց դաժանությամբ անցել էին բոլոր սահմանները: Արցախի թեմի առաջնորդ Գրիգոր եպիսկոպոս Գառնակերյանը (1900 - 1905 թթ.), զգալով ահավոր վտանգը, 1905թ. մայիսին հրաժարական տվեց: Նրան փոխարինեց Աշոտ եպիսկոպոս Շահեյանը (1905 - 1910 թթ.)[1], որը ծնվել է 1868 թվականին, ավարտել Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանը: Շահեյանը խելացի եւ գործունյա անձնավորություն էր: 1905 - 1907 թթ. Արցախի թեմը սարսափ կանգնեց իր հավատացյալներին: Այդ տարիներին տեղի ունեցած հայ-թաթարական ընդհարումներից արցախահայությունը թե՛ նյութապես եւ թե՛ ֆիզիկապես զգալի վնաս է կրել: Դա մի այնպիսի ժամանակաշրջան էր, երբ Արցախի բնակչության մեծամասնությունը տնքում էր «կարիքի մահաբեր ճիրաններում», իսկ «սովն ու մերկությունը սպառնում» էին «առաջ բերել համաճարակ հիվանդություններ: Շատերը նոյնիսկ անկողին» չունեին: Թեմակալը արցախցի հարուստներին կոչ էր անում օգնության ձեռք մեկնել երկրամասի բնակչությանը, նրանց, «որոնք հերոսաբար պաշտպանում էին հայ գիւղացիութեան կեանքն ու պատիւը»[2]:

Արցախում առաջ եկած անտանելի պայմանները ծանր հետք են թողել երկրամասի հասարակական-քաղաքական կյանքի վրա: Սովը մոլեգնում էր գավառներում: Երկրամասից հազարավոր ընտանիքներ ստիպված հեռանում էին արդյունաբերական կենտրոններ: Ժամանակի մամուլը գրել է. «Գաւառի շինական ժողովրդի դրութիւնը ծանր է, նա տանջւում է սովի ձեռքից, հաց չունի: Ամենուրեք արտերը քարացել են, օգնութեան ձայն չի լսւում...»[3]: Իսկ «Արօրը» դառնությամբ խոստովանում է, որ Արցախում «խաւարի եւ տգիտութեան մէջ խարխափում է աշխատաւոր գիւղացիութիւնը: Լոյսի կենդանարար շողերը տակաւին չեն ճառագայթել այդ անծայր աշխատանքի, բայց եւ անծայր տառապանքի վայրում»: Թերթի վկայությամբ՝ գյուղերի տգրուկները «բիրտ կերպով շահագործում են գիւղացու միամտութիւնն ու խաւարը յանուն իրենց շահախնդրութեան»[4]:

Ղարաբաղում եւ Զանգեզուրում 1907 թ. սովը ընդգրկել էր 260 բնակավայր: Դրան գումարած այն, որ 1905-1906 թվականներին տեղի ունեցած ազգամիջյան ընդհարումների հետեւանքով Արցախից հեռացել էր շուրջ 100 հազար մարդ, զգալիորեն վնասվել էին 286 բնակավայրեր, նյութական մեծ վնաս էին կրել 14.700 ընտանիք: Միայն Շուշի քաղաքում հրդեհվել էր 400 խանութ, իսկ երկրամասում թուրք-թաթարները գողացել էին 9200 խոշոր եղջերավոր անասուն, 2597 ոչխար եւ այծ, 711 խոզ, 594 ձի եւ ջորի, հափշտակվել 92379 ռուբլի արժողությամբ տնային զարդեր եւ այլն[5]:

---

1 Տե՛ս «Արարատ», 1905, սեպտեմբեր, էջ 777:

2 «Երկիր» (Թիֆլիս), թ. 5, 6.10.1906:

3 «Անկախ մամուլ» (Թիֆլիս), թ.21, 25.12.1907:

4 «Արօր» (Թիֆլիս), 1907, թ.5, 5.09.:

5 «Վավերագրեր հայ եկեղեցու պատմության», գիրք Թ. Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813 - 1933 թթ.), Եր., 2001, էջ 466-467:

Արցախցիները նյութական եւ բարոյական օգնության մեծ կարիք ունեին: Դրա կազմակերպումն իր վրա վերցնելով՝ Արցախի թեմի առաջնորդ Աշոտ եպիսկոպոսը, 1906 - 1909 թվականներին չորս անգամ ողջույնի խոսք ուղղելով արցախցիներին[6], մի կողմից բնակչությանը կոչ էր անում չհեռանալ հայրենի օջախներից, իսկ մյուս կողմից՝ արցախցի ունեւորներին հորդորում էր օգնության ձեռք մեկնել դժբախտության մեջ հայտնված հայրենակիցներին՝ նյութապես եւ աշխատանքի տեղեր բացելով:

Թեմական այդ կոչերը ունեն բարոյական արժեք եւ ժամանակակից հնչեղություն: Դրանք ներկայացնում ենք ընթերցողներին:

ՀՐԱՆՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

1.

ԿՈՉ ՇՈՒՇԵՅԻ ՀԱՅԵՐԻՆ

Ողջույն քեզ, սիրելի ժողովուրդ, լիայոյս եմ, թէ կը ցանկանաս եւ կը սիրես լսել, կարդալ, հետաքրքրուել, յուզուել, շարժուել եւ օգտուել: Եթէ այդպէս, լաւ.– գալիս եմ այս կոչով խօսելու քեզ հետ եւ յիշեցնելու քեզ քո քրիստոնեական եւ մարդասիրական պարտքերիցդ մէկը:

Միաւասիկ եկաւ կրկին նոր տարին, անցաւ հինը՝ տանելով իւր հետ առկայծեալ յոյսերի նշոյլներ, թերակատար փափագների փնջեր եւ անկատար առաջադրութիւնների ցուցակներ, թողնելով մեզ բաժին միայն լացն ու վիշտը: Նոր տարուան առթիւ կատարած շնորհաւորանքների ժամանակ, երբ մասնաւորաբար ամեն մինի մտքին զարկում է ժամանակի հեշտասահ եւ անընդհատ հոսանքը, պարտական է լրջօրէն մտածել անցնող ժամանակի անդառնալի վճիռների վերայ: Մարդիկ սովորաբար մտածում են ժամանակի արագընթացութեան վերայ, թէ ինչպէս ոչ մի զօրութիւն կարող է յետ կանգնեցնել նորա յաւերժական քայլերը, թէ ինչպէս ժամանակը իւր հետքերը թողնում է խորշոմեալ ճակատների եւ մեր արծաթափայլ մազերի վերայ եւ թէ ինչպէս նա երբեմն թողնում է խորին եւ ցաւագին վշտեր մեր սրտերի մէջ: Արժէ ուրեմն կանգնել նոր տարուան շէմքում եւ մտածել վերջացած տարուան վճիռների վերայ: Ո՛չ ապաքէն տարին կրում է իւր ծոցում ամեն մի մարդու գործերի արձանագրութիւնը, ո՛չ ապաքէն նա մի ժապաւինեալ մատեան է, որ վճիտ եւ պարզ լեզուով պատմում է ամեն մի մարդու իւր ամբողջ կեանքի պատմութիւնը: Ոչ միայն Բաղդասարի համար երբեմն անծանօթ մի ձեռք արձանագրեց Բաբելոնի պալատի որմերի վերայ, այլ ամեն մի մարդու համար եւս արձանագրում է ժամանակի անտեսանելի ձեռքը: Աչքի առաջ պէտք է ունենալ, թէ ազգերի եւ ժողովուրդների պատմութիւնն էլ նոյնպէս արձանագրում է: Ինչպէս ամեն մի անհատ, այնպէս եւ ամեն մի ազգ եւ ժողովուրդ ընթանում է յառաջ ժամանակի հետ միասին, եւ ամեն մինը իւր դերն ունի կատարելու կեանքում, եւ այս դերն էլ հաւատարմապէս արձանագրում է պատմութեան էջերում: Թող ուրեմն ամեն մէկը գէթ Նոր տարուան առթիւ աչքի անցցնէ անցեալ ժամանակի արձանագրութիւնները իւր նկատմամբ: Ժամանակը ոսկէ

6 Մեր կողմից հայտնարերվել է. երեքը:

պառերով արձանագրում է բոլոր գործերը, որոնք բղխում են սիրազեղուն եւ գթառատ սրտերից եւ անտարբեր, ցուրտ եւ անզգայ սրտերի վերայից սլանում է՝ արձանագրելու բարի բան չունենալով: Նոքա յաւիտենական ապառաժներ են, որոնք ոչինչ չեն բուսցնում, թէպէտ անցնում են յաջորդաբար եղանակներ եւ տարիներ: Երանի՛ թէ Նոր տարին զարթեցնէր նրանց, երանի՛ թէ կանգնած ժամանակի մարգարտեայ դրան վերայ՝ ափսոսալով կորցրած անպտուղ եւ անբերրի ժամանակը, որոշէին այսուհետեւ ծառայութիւն անել Աստուծուն. իսկ այդ ծառայութիւնը կայանում է մարդկանց ծառայելու մէջ՝ նշանաբան դարձնելով մարդասիրութիւնը, գթութիւնը եւ ընկերասիրութիւնը: Այդպիսով միայն կարելի է ազատուել ժամանակի արդար դատապարտութիւնից: Այդպիսով՝ միայն կարող է ամեն մի անհատ եւ ժողովուրդ, ոչ իւր ոսկիներով եւ բարձր դիրքով, այլ ազնիւ եւ բարի գործերով արձանագրել տալու իւր անունը ապագայի երանութեան ցուցակների մէջ, կենդանի օրինակ թողնելով յետնորդ սերունդներին:Տո՛ւր ինձ, սիրելի ժողովուրդ, քո ուշադրութիւնդ եւ սիրտդ, եւ ես քեզ կարդամ իմ սիրտս եւ յայտնեմ քեզ օգուտ, փառք ու պատիւ բերող նպատակս: Այսօր կատարուելու մեծ գործը եւ օրուան հրատապ խնդիրն է ամփոփել քո բոլոր զօրութիւնները մտնելու քաղաքումս գտնուող չքաւոր եւ մի կտոր չոր հացի կարօտ ընտանիքների դառն եւ անագորոյն դրութեան մէջ, ազատելու նրանց ապագայում սպառնացող վարակիչ հիւանդութիւններից եւ այլ պատահարներից, որոնց յառաջ գալու պատճառը լինում է յաճախ աղքատութիւնը: Նրանք էլ կազմում են քաղաքիս ժողովրդի մի մասը, եւ եթէ այդ մի մասը թողնուի անուշադիր, պէտք է նեխի եւ փչանայ նաեւ ամբողջութիւնը: Եթէ տկար է մարդու մարմնի մի անդամը, տկար է եւ ամբողջը, ասում է առաքեալը: Գիտութիւնն էլ նոյնն է սորվեցնում մարդկանց: Երբ որոշակի իմացում է, թէ կիսաբարբարոս երկրներում առողջապահական կանոնների զեղծումներ են լինում, եւ այդ զեղծումներից յառաջ եկած չարաթոյն սերմերը կարող են հասնել քաղաքակիրթ ազգերին, այն ժամանակ մարդիկ սկսում են մտաբերել, թէ Նոր Կտակարանի մէջ աւանդած Քրիստոսի այն սկզբունքը, թէ մարդ մարդու պահապանն ու հովանաւորողն է, ունենում է զօրաւոր հիմք ոչ թէ միայն վերացական գաղափարների մէջ, այլ նաեւ բնութեան օրէնքների մէջ: Ապացուցուած մի իրողութիւն է, թէ մի քաղաքի եւ կամ գիւղի աղքատ եւ վատթար հակառողջական վիճակը, որ յառաջ է գալիս, ինչպէս վերը յիշատակեցի, յաճախ չքաւորութիւնից, ամեն տեսակ ահռելի ախտերի սերմեր է ղրկում նաեւ ազնուականների թաղերի պալատանման բնակարանները, որոնք կառուցուած են այժմեան ճարտարապետական վերջին տեսակի նուրբ եւ գեղեցիկ ճաշակով, հետեւապէս շատ ճիշտ է այն առածը, թէ «աղքատի համար չը բացուող դուռը, վերջը կը բացուի բժշկի համար»: Անշուշտ ուրեմն, ինձ հետ դու էլ, սիրելի ժողովուրդ, կը գաս այն եզրակացութեան, թէ քո մէջ, քո շուրջը եւ քո դռների առաջ մերկ, քաղցած եւ ցրտից սարսռող չքաւորները վտանգ են սպառնում նաեւ ամբողջութեան, հանրային բարօրութեան:

Հանրային վիճակի վերայ առհասարակ մեր ունեցած գաղափարները աղէտալի կերպով տկար են եւ հէնց այս իսկ պատճառով մեր ժողովրդական կեանքը դանդաղ է յառաջադիմում եւ անգոհացուցիչ պայմանների մէջ գտնւում: Տարրական գիտութիւնն անգամ բաւական է ճանաչելու, թէ հանրային վիճակի բարօրութեան զգացմունքը որքան զօրեղ կերպով տիրէ ժողովրդին եւ ազգերին, այնքան աւելի զօրանում եւ բարգաւաճում են նրանք: Թէ վաղեմի եւ թէ արդի ազգերի պատմութիւնը վկայ է սրան: Քրիստոնեական կրօնն էլ,

որ հիասքանչ ներդաշնակութեամբ կանոնաւորել է ամեն կարգի փարբեր շահերը, պահպանելով հանդերձ անհատականը, պատուիրում է մեզ ծառայել նաեւ հանրութեան եւ լինել մարդասէր: Արդի քաղաքակրթութեան ոգին, քրիստոնեական կրօնի համաձայն, ծառայել է հանրային շահերին մեծ անձնուիրութեամբ՝ միեւնոյն ժամանակ չը մոռանալով անհատին եւ պաշտպանելով նաեւ նորա շահերը: Բոլոր մեծ ազգերի յատկանիշն է եղել հանրային շահը գերադասել ամեն բանից եւ կենտրոնի նման համախմբել նորա շուրջը բոլոր անհատական շահերը եւ ուժերը: Եւ ահա այս է այն առաջին սկզբունքներից մինը, որ անհրաժեշտ է սովորել եւ գործադրել կեանքի մէջ, եթէ ժողովրդական կեանքի բարօրութեան մէջ փափագում ենք յառաջադիմել: Քրիստոնեական քաղաքակրթութիւնը խստիւ դատապարտում է սոսկ անձնական շահերին հետամուտ լինելու քաղաքականութիւնը, եւ նորա արդիւնքներից ամենափառաւորը այն է եղել, որ մարդիկ նորա գերահրաշ ազդեցութեան տակ սովորել են իրենց անհատական սահմանափակ եզերքներից դուրս գալ եւ սէր ու գթութիւն ծաւալել ոչ թէ միայն իրենց ընտանիքների եւ մերձաւորների վերայ, այլ եւ ամենքի վերայ անխտիր, Նեղոսի ջրերի նման, որոնք, դուրս գալով ափերից, տարածում են բովանդակ արտերի վերայ՝ նրանց ոռոգելու եւ բեղմնաւորելու:

Պէտք է ամեն մի մարդ խորին համոզումն դարձնէ այն ճշմարտութիւնը, թէ ոչ մէկը չի կարող իբր անհատ բաժանել իրեն հանրութիւնից: Ապացուցուած մի ճշմարտութիւն է, թէ անհատական շահերը սերտ կերպով կապակցուած են հանրութեան շահերի հետ եւ անհատական վնասը հանրութեան վնասն է: Որչա՜փ սխալ է ուրեմն, երբ մարդս կարծում է, թէ ինքը բաժանուած հանրութիւնից կարող է ապրել միայնակ, առանց նկատելու հանրային վիճակն ու կացութիւնը: Անմիտ կոչեց Քրիստոս մէկին, որ իւր անձնական ամբարները լցրած լինելով երազում էր երկարատեւ երջանկութիւն, առանց մտածելու, թէ ապագան իր ձեռքին չէ: Անմիտ կարելի է ասել նաեւ այն բոլորին, որոնք կարծում են, թէ իրենց անձնական ամբարների վիճակը եւ իրենց հարստութիւնը ամփոփող երկաթեայ ամուր սնդուկները բաւական ապահոված կը լինին ներկայ եւ ապագայ յարատեւ երջանկութիւնը՝ ամենեւին ուշադրութիւն չը դարձնելով իրենց շուրջը գտնուող իրենց նմանների դառն վիճակին, կարծելով հանդերձ, թէ այդ տեսակ իրերի վերայ խօսելը ոչնչաբանութիւն է, եւ նրանց համար գործելը եւ նրանց վիճակը փոքր ի շատէ բարուոքելու համար իրենց վաստակից մասն ու բաժին հանելը՝ ժամավաճառութիւն: Արարիչը, ինչպէս երկնքի գնդերը եւ նրանց բաղկացնող ամենափոքր հիւլէները, նոյնպէս եւ բոլոր բարոյական էակները միմեանց հետ կապակցել է անքակտելի կապերով եւ ոչ ոք կարող է այս լայնածաւալ աշխարհի վերայ ապրել միայնակ եւ անջատ ուրիշներից, որքան էլ լիքը լինին անհաշիւ հարստութեամբ իւր անձնական ամբարները:

Այս գերազանց ճշմարտութիւնը կարեւոր է ըմբռնել, եւ այս է այն ճշմարտութիւնը, որ մասնաւորապէս պէտք է յառաջ մղէ թէ քաղաքիս եւ թէ օտար քաղաքներում բնակուող շուշեցի հայերին նկատելու իրենց քաղաքակիցների հանրային վիճակը՝ տալով սրան այնքան կարեւորութիւն, որքան տալիս է ամեն մինը, ինչպէս իւր պարտքն է, իւր անձնական եւ անհատական վիճակին: Այս ճշմարտութիւնը պարտք եմ համարում յիշեցնել. ճշմարտութիւն՝ թէ ամեն մարդ չի ապրում միայն իւր անձի եւ իւր ընտանիքի բարիքի համար, այլեւ ուրիշների համար: Այս է պահանջում նաեւ մեր սուրբ կրօնը, այս է պահանջում նաեւ դարուս ոգին եւ այս է պահանջում նաեւ ամեն մինի անձնական եւ անհատական շահն ու բարիքը:

Աղքատ, չքաւոր եւ կարօտեալ անձանց եւ ընտանիքներին կեանքի մրրկալից ծովի մէջ ամենածանր կռւում, այն է՝ մարդուս նիւթական գոյութիւնը պահպանելու խնդրում, օգնութեան ձեռք կարկառելը եւ մշտապէս հովանաւորելը եղել է, է եւ պէտք է լինի քրիստոնէական եկեղեցու, քրիստոնեայ անձանց եւ համայնքների յաւիտենական կոչման մի ամենից կարեւոր, ամենից գրաւիչ եւ ամենից համակրելի մասը: Այն մասն է կազմում Քրիստոսի բարոյական բոլոր պահանջների եւ քրիստոնէավայել կենցաղավարութեան ամենագեղեցիկ եւ օգտակար կողմը եւ մարդկային խառնաշփոթ, շահախնդիր եւ եսամոլ կեանքում աղքատին եւ աշխատանքի անկարող անտուն անտէր չքաւորին օգնութեան ձեռք մեկնելու բարոյական պարտաւորութեան բարձրագոյն գաղափարի մարմնացման մէջն է եւ օգնողի մարդավայել կեանքի փայլն ու գեղեցկութիւնը:

Քրիստոնէական կրօնի եւ իր հարազատ ծնունդ մարդասիրութեան յաղթական ընթացքը դարերի, ազգերի եւ անհատների վրայով եւ իր լայնածաւալ իշխանութիւնն ու տիրապետութիւնը մարդկային սրտերի վերայ ամենամեծ չափով պարտական է այն աննման հմայքին, որ արտացոլում է անձնուիրութիւն, ընկերասիրութիւն, մարդասիրութիւն եւ անձնականը յօգուտ ընդհանուրի բարօրութեան զոհաբերելու սիրայօժար պատրաստակամութիւն: Քրիստոնէական եկեղեցու այս սիրոյ եւ գթութեան գործի քարոզութիւնը արծարծելու, յուզելու, հաստատելու եւ ընդհանուր տրամադրութիւն, վճիռ եւ կամք դարձնելու պարտքն եմ կատարում՝ այս կոչով քեզ դիմելով, սիրելի ժողովուրդ, յիշեցնելով քո քրիստոնէական եւ մարդասիրական կոչումը:

Իմ ամենաջերմ ցանկութիւններից եւ փափագներից մէկն էր, տեղս գալուն եւ վիճակային ընթացիկ կարեւոր գործերը կարգի բերելուն պէս հրաւէր կարդալ քեզ, սիրելի ժողովուրդ, քո օժանդակութեամբ եւ աջակցութեամբ կազմակերպելու մի աղքատախնամ հոգաբարձութիւն, կարօտեալ անձանց եւ ընտանիքներին օգնելու, նոցա վիշտը փոքր ի շատէ ամոքելու եւ կեանքը գէթ մասամբ մխիթարական եւ յուսալից դարձնելու: Այսպէս խոստացայ նաեւ իմ անդրանիկ քարոզում, Վեհափառ Հայրապետի՝ թեմիս հայ ժողովրդին ուղղած Կոնդակի ընթերցման օրը: Սակայն շատ շուտ անակընկալ վրա հասան ժամանակակից թունալից օրերը եւ խորին վշտով, թախիծով եւ կսկիծով լցնելով բոլորիս սրտերը, ամեն օգտակար եւ բարի ցանկութիւն առկախ թողին:

Քաղաքիս դժբախտութեան ճիչն ու աղաղակը հասաւ հեռո՛ւ, շատ հեռո՛ւ. զգալու եւ կարեկցելու ընդունակ հայ սրտերը շտապեցին ամեն կերպ օգնել աղէտից յառաջ եկած նոր թշուառներին, իսկ հին թշուառները՝ սովորական աղքատ ու չքաւոր ընտանիքները, բնականաբար եւ անխուսափելի կերպով մոռացութեան տրուեցին մի առ ժամանակ եւ այս դառն ամիսների ընթացքում չը գրաւեցին շուշեցի հայերի նիւթական կարողութեամբ փոքր ի շատէ ապահովուած անձանց ուշադրութիւնը գէթ այն չափով, որչափ գրաւել են եւ կամ գոնէ գրաւած պէտք է լինէին մի այլ խաղաղ ժամանակ:

Շուշեցի հայերի բարոյական եւ անյետաձգելի պարտքն է, երախտագիտութեամբ հանդերձ օրհնելով աղէտից յառաջ եկած նոր թշուառներին օգնողների կեանքը, շտապել իր վերայ առնելու եւ սրբութեամբ յառաջ տանելու սովորական չքաւոր եւ կարօտեալ ընտանիքների ամենաանհրաժեշտ կենսական կարեւոր պիտոյքները հոգալու քաղցր լուծը:

Իմ կողմից հրաւէր կարդալով եւ յորդորելով քաղաքիս հայ հասարակութեան եկեղե-

ցիների գումարներից մասն հանելու եւ սկզբնական դրամագլուխ դարձնելու ծրագրուող աղքատանոցի[7] համար, հրաւիրում եմ նաեւ Շուշեցի բոլոր բանիմաց եւ զգայուն հայ անձանց միացեալ ուժերով եւ աշխատութեամբ աջակցել ինձ յաջողեցնելու այս քրիստոնեական եւ մարդասիրական մեծ գործը:

Ահա մի առիթ, սիրելի ժողովուրդ, գոհացնելու քո գթութեան եւ սիրոյ զգացմունքները եւ զգալու այն անզուգական մխիթարութիւնը եւ ներքին հրճուանքն ու ուրախութիւնը, որոնք բղխում են այս օրինակ գթութեան եւ մարդասիրութեան բարի գործերից:

Առաջնորդ թեմին Ղարաբաղու՝ ԱՇՈՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ

3-ին յունուար 1906թ. Շուշի

Հիմք՝ ՀԱԱ, ֆ.56, ց.14, գ.236, թ.1-2:

2.
[ԵՐԿՐՈՐԴ] ԿՈՉ ՇՈՒՇԵՑԻ ՀԱՅԵՐԻՆ

Ի՜նչ ներշնչումներ ունի տարին, հինը իր վերջին օրուայ վերջալուսով եւ նորը իր առաջին օրուայ արշալուսով բոլոր մտածող եւ զգացող մարդկանց համար: Տարուայ այս առաջին ամիսը որքա՜ն խորհրդալից է,– տօնական ամիս, երբ առիթ ենք ունենում երկու անգամ միմեանց շնորհաւորելու, բարեբաստիկ եւ բաղդաւոր կեանքի բարեմաղթութիւններով հանդերձ: Որչա՜փ թարմ եւ ցնծալից ճակատներ են ներկայանում ծնողական եւ բարեկամական գորովալիր համբոյրներով այս շնորհաւորութիւններին ու բարեմաղթութիւններին, եւ որչա՜փ սրտեր են զուարթանում այս նորութիւններին,– այս տօնական օրերին: Բայց միեւնոյն ժամանակ, որքա՜ն մութ ու տրտմաթախիծ սրտեր կան, եւ որքա՜ն տներ թափուր մնացած աշխատող առնական ձեռքերից: Որքա՜ն օրօրոցներ դատարկ եւ որքա՜ն մթապատ ու խոցուած հոգիներ, որոնք աւելի են խոցւում ու մթնում այս ընդհանրական ուրախութեան տօներին:

Այս բոլորը նոր բաներ չեն եւ ոչ էլ անծանօթ ձեզ, Շուշեցի մեծատներ: Դուք բոլորդ էլ գիտէք ձեր քաղաքում թշուառութեան եւ ծայրայեղ չքաւորութեան թունալից ճանկերի մէջ հեւող ու հառաչող, եւ օրական մի կտոր չոր հացի կարօտ մերկ ու բոբիկ բազմաթիւ ընտանիքների աղիողորմ դրութիւնը: Բայց միմիայն գիտենալը, խօսելն ու ցաւելը բաւական չէ, այլ եւ առաջն առնելու համար միջոցներ պէտք է գործ դնել, որի համար լուռ ու անտարբեր էք: Ձեզանից ամեն մէկը ընդունակ է յաճախ իր իրաւունքի եւ չափի սահմանից ելնել ու խօսել մեծ-մեծ եւ այլանդակ պահանջներ անել ուրիշներից, բայց երբ խնդիրը գալիս է ձեռնարկելու դրական մի գործ աղքատութիւնն ու թշուառութիւնը մեղմացնելու համար, բոլորդ էլ խուսափում էք՝ իմանալով, որ այդ դրական գործը կարօտ է եւ դրամական զոհաբերութեան:

Նախանցեալ տարի հէնց այս օրերին էր, երբ մի գրաւոր ընդարձակ կոչ ուղղեցի ձեզ, փարթամութեան ու ճոխութեան բաղդաւոր զաւակներ: Այդ կոչի մէջ նկարագրել էի քաղաքումս գտնուող որբերի, տնանկների, այրիների եւ առհասարակ թշուառութեան բաժակի

7 Շուշիում աղքատանոց բանալու Աշոտ եպիսկոպոսի ջանքերը հաջողություն չունեցան (Հ. Ա.):

դառն մրուրը մինչեւ յատակը քամող անբաղդների դժնդակ վիճակը՝ յիշեցնելով հանդերձ ձեր քրիստոնէական ու մարդասիրական պարտաւորութիւնները: Յայտնել էի իմ ջերմ ցանկութիւնը քաղաքումս աղքատանոց բանալու մեծ կարեւորութեան համար, բայց այդ բոլորը չիրականացան եւ ձեզանից ոչ մինը մի ձայն, մի ծպտուն չը հանեց: Այդ կոչից յետոյ մի քանի անգամ հրաւիրեցի ինձ մօտ քաղաքիս եկեղեցիների ծխական հոգաբարձութիւնները, բացատրեցի պետական օրէնքով իրենց շնորհուած արտօնութիւնները եւ աղքատանոց բանալու անհրաժեշտութիւնը: Հրաւիրեցի նաեւ քաղաքիս առաջաւորներին նոյն նպատակով, բայց բոլորն էլ բերան առած մի խօսք էին ասում, թէ «դեռ ժամանակը չէ, այստեղ մեծատուն չը մնաց, բոլորն էլ գաղթեցին, վերադառնան՝ յետոյ»: Բայց մի՞թէ գաղթողները իրենց տեղերից չեն կարող մասնակցել այդ բարի գործին, եւ ի՞նչ հիմք կայ սպասելու նրանց վերադարձին, մինչ աղետներից շատ առաջ էլ շարունակ գաղթելու եղեւից են եղել շուշեցիք, եւ այսօր Բագւում բնակւող բոլոր մեծատները շատ առաջ են գաղթած Շուշուց: Ո՛չ, ո՛չ, այդ անհիմն պատճառաբանութիւնները չեն կարող ձեզ արդարացնել եւ ոչ էլ գաղթածներին: Ամեն ժամանակ էլ յարմար է բարի գործ կատարել եւ երբեք չը պէտք է թողնել մի գործ վաղուան, որը այսօր կարելի է կատարել:

Բովանդակ աշխարհը շարժւում է, ամեն մարդ եւ ազգ հառաչում է բարենորոգումների համար, երկրի մի ծայրից մինչեւ միւս ծայրը մի ձայն է բարձրանում, եւ մի եռանդագին բաղձանք, իղձ եւ ակնկալութիւն արտայայտւում: Աղքատն ու տգէտը արտասւում, ողբում եւ սպասում են իրենց վիճակների բարւոքման, եւ այս բարւոքումը կապուած չէ այնքան պետական կառավարչական մարմինների հետ, որչափ ժողովրդի մէջ գտնուող բանիմացների եւ մեծատների հետ: Բայց դուք, շուշեցի մեծախօս բանիմացներ եւ միլիօնների մէջ լողացող մեծատներ, մինչեւ այսօր գործնական ոչ մի քայլ անել չուզեցիք, անշարժ մնացիք ձեր երկարամեայ թմրութեան մէջ, սթափուելու ոչ մի շարժում արիք եւ ոչ էլ մի ձայն հանեցիք միանալու աշխարհիս ամեն կողմից լսող մեծ ու բարձրագոչ աղաղակին, այլ միայն բաւականացաք մի քանի կոպէկներ ու մանէթներ շպրտելով վերջին աղետներից յառաջ եկած քաղցածների առաջ, բայց ի՞նչ մեծ շնորհ էր այդ, եւ ի՞նչ նշանակութիւն ունի ծարաւ մարդու համար ջրով լի ամբարներից մի կաթիլ ջուրը, եւ ձեր տուածը միայն մի կաթիլ ջրի չափ էր եւ ոչ աւելի:

Ինչ խուսափողական ձեւեր էլ գործ դնելու լինիք դուք, շուշեցի մեծատներ, հարեւանցի մի ակնարկ բաւական է համոզուելու, թէ դուք պարզապէս ձեր պարտքը չը կատարելու համար էք այդ ձեւերը կամ երբեմն բանաձեւերը գործ դնում, որոնք շատ բազմատեսակ են եւ անհամար, որովհետեւ մինչ պարտքը կատարելը ամենապարզ եւ որոշ մի բան է, պարտաւորութիւնը չը կատարելու համար ձեռք առած առիթներն ու հնարքները ամենակնճռոտ եւ անել լաբիրինթոսներ են: Պարտքը չը կատարող մարդը ամեն միջոց գործ է դնում փախուստ տալու այն որոշ, պարզ եւ ակներեւ շաւղից, որ պարտաւորութեան շաւիղ է կոչւում: Այդ բաւական չէ, դեռ եւս պարտքը չը կատարելով հանդերձ՝ շատերը ցոյց են տալիս լոկ խօսքերով պարտք կատարողի երեւոյթ՝ սպանելու իրենց անմիտ փափագը: Բայց ո՛չ, շուշեցի՛ մեծատներ, այդ փառաւորութիւնը եւ պարծանքը, այդ շողուն պսակը նրանց է միայն պահուած, որոնք իրօք առանց փախուստ տալու, առանց սնոտի պատճառներ առաջ բերելու, պարզօրէն եւ յօժարակամ կատարում են իրենց պարտքը: Պարտազանցութիւնը իր բո-

լոր ճիւղերի մէջ ամենախորին զգուանքի եւ արհամարհանքի միայն արժանի է, եւ հէնց այդ է պատճառը, որ ամեն մարդ ջանք չի խնայում պարտազանց չերեւալու համար: Կան նաեւ մարդիկ, որոնք առարկում են շարունակ, թէ ուրիշները թերանալով իրենց պարտքը կատարելու մէջ, իրենք էլ արգելւում են իրենցը կատարելու: Սա մեր ազգին յատուկ բնատրոմիկ մի հանգամանք է, բայց կրթուած ժողովրդի մէջ առհասարակ ընդունուած է, որ ամեն մարդ ունի իր պարտքը եւ իր դերը կատարելու կոչումը, եւ մի ուրիշը՝ որքան էլ բարձր կոչում եւ դիրք ունենայ, չի կարող անել այն՝ ինչ որ նախախնամութիւնը եւ ընկերական օրէնքները սահմանել են իր համար: Դիտե՞լ էք արդեօք, թէ մեր վէճերը եւ գժտութիւնները որտեղից են ծագումն առնում: Նայեցէք մեր ժողովրդի գործերի դժուարութիւնների վրայ եւ կը տեսնէք, որ ամեն մարդ յանցանքը դիմացի մարդուն է վերագրում: Միշտ մէկը կայ, որ իր պարտքը չի կատարում, բայց ի՞նքը, ո՜հ, ինքը միայն կարող է ուրիշների պարտազանցութիւնների հետքերը գտնել ու խօսել, անդուռն բերանով ողբերգական մրմունջներ արտայայտելով հրապարակների անկիւններում եւ իր առաջ բաց մամուլի էջերում:

Ժողովուրդը գանգատւում է եկեղեցականներից, թէ նոքա անարժան են եւ անհամապատասխան իրենց կոչմանը, եկեղեցականներն էլ միւս կողմից հանդարտ եւ անդորր խղճով բարբանջում են, թէ «այսպիսի տգէտ ու պարտազանց ժողովրդին ի՞նչ բարիք եւ ի՞նչ օգնութիւն կարելի է անել», եւ ձեռքերը լուանալով ու գործից յետ քաշուելով խնդիրը փակուած են համարում: Այս բոլոր գանգատների, ամուլ բացականչութիւնների եւ սնամէջ բարբանջմունքների միակ պատճառը մի հատ է եւ այն էլ շատ պարզ, որ ամեն մարդ պարտաճանաչութեան վսեմ եւ գերագոյն ներշնչմամբ չի գործում եւ չի կատարում այն ազնիւ, վեհագոյն եւ փրկարար որոշումը, թէ ինքը պէտք է կատարէ իր պարտքը՝ առանց սպասելու, որ մի ուրիշը նախ կատարէ իրենը:

Դու՛ք, շուշեցի՛ մեծատուներ, սովոր էք միայն անցեալի դառն իրողութիւնների վերայ նստել եւ լալ, բայց անցեալի վերայ հիւսուած յուսահատ ողբերով չի փրկուի ոչ անհատ եւ ոչ ազգ: Անցեալում կարող են աղէտալի շատ դէպքեր պատահած լինել, բայց ահա՛, Աստուած տալիս է ձեզ նոր ժամանակ արիանալու, ներշնչուելու եւ դարմանելու ձեր ազգայինների աղէտները եւ դժբախտութիւնները՝ ընթանալով պարտաւորութեան շաւղով: Եւ ո՛ւր էր, թէ այս նոր տարուան հետ ներշնչուէք այդ մաքուր եւ առողջ զգացմունքներով, երբ միայն կարելի էր ձեզանից սպասել բարի գործեր՝ առանց ծանր բեռ համարելու ձեր կատարած բարիքը: Քանի որ դուք ծանր բեռ կը համարէք ձեր պարտքը, նրանք աւելի պէտք է ծանրանան ձեր վերայ, իսկ երբ համարէք ձեր յատուկ պարտքը, այն ժամանակ ոչ միայն թեթեւ, այլ եւ ձեր փառքն ու պսակը կը լինին նրանք: Ահա լուսաւորութեան, զարգացման եւ բարձրացման փառաւոր ճանապարհը: Աշխարհիս վերայ չը կայ պարտքի կատարման պէս աւելի գեղեցիկ բան: Հանճարի յաղթանակները կարող են շլացուցիչ լինել, մեծ բաղդաւորներ կարող են աւելի յուզիչ լինել, բայց չը կայ իրօք մի բան, որ այնքա՛ն արժանաւոր ու փառաւոր լինի, որքան այն հաստատուն, անվրդով եւ եռանդուն կորովը, որով մարդ կատարում է իր ընկերական, քաղաքացիական եւ ազգայնական պարտականութիւնները: Սա իր մէջ ունի բարոյական մի տարր, որ ուրիշ բոլոր բաներից գերազանց է: Հանճարը շատ քիչերին է բաժին ընկնում, բաղդը շատ քիչերին է ժպտում, թէպէտ յիմարներն են միայն բաղդին սպասում, մինչդեռ ամենքս էլ կարող ենք աշխատել այն գործի համար, որ ժողովրդական թշուառու-

թեան, աղքատութեան ու տգիտութեան առաջն է առնում: Եւ հաւատացած եղէք, որ հաւատարմօրէն կատարուած պարտաւորութիւնը միշտ ունի իր ճոխ վարձատրութիւնը: Մինչ հանճարի պսակները թարշամում են, եւ սոսկ բաղդաւորների մրցանակները յօդս են ցնդում, պարտքի կատարման ոսկեղէն պտուղները հաւաքում եւ մնում են յաջորդող սերունդների ափերում դարէ ի դար:

Յիշեցէ՛ք, ուրեմն, շուշեցի մեծատներ, որ պարտք ունիք կատարելու եւ ձեր այսօրուան անհոգութիւնը դէպի ձեր թշուառ ու տառապեալ հայրենակիցները դատապարտութեան կնիք պէտք է դրոշմէ ձեր ճակատներին: Յիշեցէ՛ք, աղաչում եմ ձեզ, յիշեցէք գէթ այս տարի Շուշու աղքատութեան տխուր վայրերը, չքաւորութեան բոլոր տառապանքները, բոլոր արցունքոտ աչքերը, բոլոր մթնած խաւարած սրտերը եւ բոլոր յուսահատ կեանքերը, որոնք այնքա՛ն բազմաթիւ են Շուշու բարձունքի վերայ:

Ես երկար ու բարակ կշռադատելուց յետոյ եկել եմ այն եզրակացութեան, որ աղքատանոցը այնքան էլ մի օգտակար հաստատութիւն չի կարող լինել, որովհետեւ աշխատանքի անընդունակ մարդկանց հետ նաեւ պէտք է օգտուին ընդունակները եւ ձրիակերութեան ու ծուլութեան ընտելանան: Աւելի նպատակայարմար է, որ քաղաքը ունենայ տնայնագործութեան մի ընդարձակ արհեստանոց[8] իր բոլոր ճիւղերով: Այժմ քաղաքը ունի ջուլհականոց անուամբ մի արհեստանոց, որը բացուել է տեղւոյս նպաստամատոյց յանձնաժողովի օժանդակութեամբ եւ աջակցութեամբ եւ ունի իր առանձին վարչութիւնը, բայց շատ սահմանափակ լինելով եւ աննշան դրամագլուխ ունենալով՝ հազիւ կարողանում է 40-աչափ մարդ աշխատեցնել: Այս ջուլհականոցը կարելի է ընդարձակել, որտեղ կարող են մի քանի հարիւր մարդիկ աշխատել եւ իրենց ձեռքի աշխատանքով ապրել, եւ միայն աշխատանքի անընդունակներին՝ կարելի է արհեստանոցի տարեկան մնացորդ արդիւնքից նպաստ տալ: Սա մի կրկնակի բարի գործ կը լինի Շուշու չքաւորների համար, որոնք իրենց աշխատանքով իրենց ապրուստը հոգալով հանդերձ՝ չեն ընտելանալ ձրիակերութեան եւ ծուլութեան, եւ միեւնոյն ժամանակ կը սովորեն տնայնագործական արհեստներ: Բացուելիք արհեստանոցում կարող են եւ գաւառներից գալ սովորելու եւ նոյնը տարածելու գիւղերում:

Այս բարի ու օգտակար խնդիրը դնելով ձեր առաջ, շուշեցի մեծատներ, աղաչում եմ ձեզ, յանուն մեծ մարդասէր Փրկչի հրաշալի ծննդեան, արէ՛ք ինչ որ կարելի է անել եւ որքան կարելի է շուտ, եւ հաւատացած եղէք, որ կեանքի ամենալաւագոյն օրերը կը լինին ձեզ համար այն օրերը, երբ գործած կը լինիք առաւելագոյն բարիք:

Թողնենք դեռ ձեր հայրենիքի երկու սեռերի կրթութեան հաստատութիւնները, որոնք այնքա՛ն աննախանձելի եւ ձեզ պատիւ չը բերող նիւթական անձուկ վիճակի մէջ են գտնուում, որի մասին մի ուրիշ անգամ հանդէս կը գամ, առ այժմ համարեցէք ձեր առաջին գործը քաղաքումս տնայնագործութեան մի ընդարձակ արհեստանոց բանալ իր բոլոր հնարաւոր ճիւղերով, որին կից կը լինի նաեւ դպրոց՝ նոյն հաստատութեան մէջ աշխատող չքաւորների երկսեռ զաւակների տարրական կրթութեան համար: Եւ ահա դրանով միայն կարող էք զուարթացնել ձեր հայրենի քաղաքի աղքատութեան խոնաւ ու մութ բնակավայրերը եւ չքաւոր ու քաղցած, մերկ ու բոբիկ մանուկների սրտերը, եւ սփոփել տառապեալն ու սրտաբեկը:

---

8 Շուշիում տնայնագործության ընդարձակ արհեստանոց բանալու վերաբերյալ Աշոտ եպիսկոպոսի ջանքերը նույնպես վերջացան անհաջողությամբ (Հ.Ա.):

Պարտքի ամենամեծ բաժինը ընկնում է ձեր վրայ, Շուշուց դուրս ապրող եւ մանաւանդ Բագում բնակուող շուշեցի՛ մեծատներ, շարժուեցէք ուրեմն բարի գործի համար, ժողովներ կազմեցէք, խօսեցէք ու որոշեցէք վերջնականապէս յաջողեցնելու այս բարի եւ ձեզ պատիւ, փառք ու պարծանք բերող գործը, եւ եղէք ձեր սիրով ու գթութեամբ անուշաբոյր ծաղիկներ ձեր ծննդավայրի՝ լալով ու դառն արցունքներով ողողուած թախծութեան վայրերում: Այդ է ձեր սեպուհ եւ սրբազան պարտքը, եւ հրաւիրում եմ ձեզ ձեր պարտքի կատարման հանդիսավայրը, որտեղ կարող էք ժառանգել յաւերժական անուն եւ ճոխ վարձատրութիւն:

Ղարաբաղի Հայոց թեմի Առաջնորդ՝ ԱՇՈՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ

4-ին յունուարի 1908թ., Շուշի
Հիմք՝ ՀԱԱ, ֆ. 56, ց.14, գ.236, թ.3-4:

3.
[ՉՈՐՐՈՐԴ] ԿՈՉ ՂԱՐԱԲԱՂՑԻ ՀԱՅԵՐԻՆ

Թէեւ յաճախ քարոզներ խօսել եմ եւ խօսում եմ քաղաքիս եւ պատահած դէպքերում թեմը շրջագայելիս գիւղական ժողովրդին, բայց այս նոր տարուայ առթիւ սրբազան պարտք եմ համարում դարձեալ գրաւոր խօսել ձեզ հետ, ղարաբաղցի հայեր, եւ ցոյց տալ ձեզ աշխարհիս վերայ ապրելու եւ յառաջադիմելու լաւագոյն եղանակ եւ օգտակար կեանքի անհրաժեշտ պայմաններ: Եւ ո՞ւր էր, թէ մի օգտակար ծառայութիւն մատուցած լինէի ձեզ սրանով:

Երբ ժամանակի անընդհատ հոսանքը կրկին բերեց մեզ նոր թուական, երբ զգալի մի քայլ եւս արինք դէպի յաւիտենականութիւն, սրբազան պարտաւորութիւն է ամեն մէկիս համար տարուան առաջին օրերին մտածել խորապէս, մեր անձանց եւ մեր կեանքի վերայ:

Մի տարի եւս տուեց մեզ իր հրաժեշտի վերջին ողջոյնը եւ գնաց միանալու անեզր յաւիտենականութեան մէջ իր անթիւ ընկերներին, եւ մենք դիմաւորեցինք նոր տարուան ոսկի հղձերով ու վարդակարմիր յոյսերով: Բայց մի տարտամ եւ մելամաղձիկ տխրութիւն չե՞նք զգում արդեօք մեր սրտերի մէջ, եւ խնդութեան ժպիտների ներքեւ մի խորին թախիծ եւ վիշտ պատած չէ՞ արդեօք մեր ներսը:

Անցա՛ւ մի տարի միայն, բայց որքա՜ն անկապտար բարիքներ եւս անցան իր հետ: Անցա՛ւ մի տարի, բայց դառնութեամբ շաղախուած արցունքների ի՜նչ աղի գետեր ողողեցին նրան, վշտերի ծանրութեան տակ ընկճուած սրտերից ի՜նչ աղիողորմ հառաչանքներ ու հեծեծումներ դիզուեցին նրա վերայ, եւ ի՜նչ սեւ խորհուրդներ ու գործեր մրոտեցին նրա էջերը: Բայց անցա՛ւ նա, անցա՛ւ անտարբեր, արագընթաց արեգական նման, ոմանց օրհնութիւններ եւ ոմանց աղէտներ բերելով իր ճանապարհորդութեան ընթացքում:

Բարո՛վ գնայ յաւիտենական ուղեւորը, բարո՛վ գնայ եւ թող տանէ աշխարհիս տեղեկագիրը մատուցանելու Ամենակալ Արարչին, թողնելով նաեւ աշխարհիս քաղաքակրթութեան յաղթական գնացքի մէջ իր անջնջելի արձանագիրը:

Ոհ, արդեօք ինչպիսի՛ անջինջ հետքեր գծեցինք ամեն մէկս նրա վերայ եւ ի՜նչ խորհուրդներ ու գործեր յանձնեցինք նրան իբրեւ աւանդ յիշատակաց արժանի յետնորդ դարերում յաջորդող սերունդների համար: Այո՛, ամեն մի ոսկեթեւ վայրկեան մինչ թռչում էր լռիկ եւ

մնջիկ ամեն մէկիս կեանքի հորիզոնից, մեր կեանքի պատկերը, մեր կենսագրութիւնը դրոշմեցինք նրա վերայ, որին ոչ ժամանակի երկաթեայ ձեռքերը կարող են աւերել եւ ոչ էլ յաւիտենականութիւնը կարող է նրա մի բիծն անգամ հեռաջինջ անել:

Ահա այս ահաւոր խորհուրդների առաջ ակամայից հակում ենք դողահար, երբ մանաւանդ աչքի առաջ ենք ունենում մեր էութեան այն ամենաթանկագին մասը, որ ամեն մէկս յանձնեցինք նրան եւ նա վերցնելով իր հետ յաւիտեանս բաժանուեց մեզանից, մեզ բաժին թողնելով միայն մելամաղձիկ յիշատակներ:

Անցա՛ւ այսպէս հին տարին, բայց Նոր տարին պերճաշուք թագուհու նման բազմած ժամանակի հրափայլ կառքի վերայ՝ բարձրացաւ արեւելեան հորիզոնից եւ իր ոսկեղէն բանալիով բացեց մեր առաջ ապագայի փառաշուք տաճարի դռները՝ ներս հրաւիրելով մեզ: Բայց արդեօք ակնածութե՞մբ մօտեցանք նրա շէմքին եւ երկիւղո՞վ դրինք մեր ոտքերը նրա գաղտնածածուկ սրահի վերայ: Պատկերացրի՞նք արդեօք մեր աչքի առաջ մեր անցեալը եւ կարողացա՞նք արդիւնաւէտ եւ գոհացուցիչ հանդիսացնել մեզ համար նրա ընթացքը եւ յիշեցի՞նք արդեօք այն սերտ կապակցութիւնը, որ ունի ներկան անցեալի հետ:

Ասում է սովորաբար, թէ անցեալ տարին գնաց, բաժանուեց մեզանից յաւիտենապէս: Ճշմարիտ է այս, բայց նոյնը կարո՞ղ ենք ասել նաեւ անցեալ ժամանակի բարի եւ կամ չար ազդեցութիւնների եւ վնասակար ու օգտակար գործերի նկատմամբ: Նրանք էլ յաւիտենապէս բաժանում, անցնում են առանց ազդեցութեան, թէ իրենց հետքերը թողնում են հետագայ ժամանակների վերայ: Ժամանակը անցնում է, բայց ոչ մեծ եւ առաքինի մնայուն գործերի արդիւնքը:

Դարձնենք մեր աչքերը դէպի անցեալը եւ տեսնենք, թէ ի՞նչպէս անցեալի մեծ եւ բարի գործերը իրենց բարերար ազդեցութիւնը հասցրել են մինչեւ մեր օրերը, եւ տարիներն ու դարերը չեն կարողացել նրանց մի վնաս հասցնել:

Ի՜նչ ուշագրաւ իրողութիւն է, որ անցեալի այն յիշատակարանները, որոնք շինուած էին փառքի ու համբաւի համար, այսօր նրանցից շատերը գրեթէ չքացած են, իսկ եթէ կան մնացածների բեկորներ, նրանք էլ իբրեւ հնութիւն միայն արժէք ունին մինչ բարերարական շինուածները մինչեւ այսօր մնում են դեռ, բարերարելու մարդկային ազգը:

Ամենից հարուստ եւ ամենից իմաստուն ինքնակալ Սողոմոն թագաւորի շքեղափառ պալատները իրենց եղեւիններով, ոսկիներով եւ փղոսկրներով այսօր չը կան, բայց մնում են մինչեւ այսօր նոյն Սողոմոնի ջրամբարները եւ ջուր են մատակարարում շատերին:

Սուրբ քաղաքի վաղեմի ճարտարապետութիւնից ոչ մի քար քարի վրայ չը մնաց, բայց մնում է Բեթհեսդայի աւազանը եւ դեռ գրաւում է ճանապարհորդների ակնածանքը:

Հին Պարսկաստանի մեծահամբաւ Պերսեպոլիս քաղաքի սիւներն ու պարիսպները փշրուած ու փոշիացած են, բայց նրա աւազանները եւ ջրմուղները մնում են դեռ եւ գրաւում են անցորդների զմայլումը:

Ներոնի ոսկեղէն տունը աւերակների մի շեղջակոյտ է դարձած, բայց Կղոդիոսի ջրմուղը դեռ եւս չի դադարել Արնոյ մեծ գետից իր ականակիտ ջրերը Հռովմ քաղաքը թափելուց:

Ասորիքի Պալմիրա քաղաքում արեգական երկրպագութեան համար կառուցուած հսկայական ու հոյակապ մեծ տաճարը կործանուեց, բայց նրա աղբիւրը արեգական ճառագայթների տակ մինչեւ այսօր էլ փայլփլում է այնքա՛ն թարմութեամբ, որքան երբ հազա-

բաւոր ու բիւրաւոր հեթանոս ուխտաւոր երկրպագուներ խռնուում էին տաճարի բարձրաբերձ սիւների շուրջը:

Ահա սրանք են բարի եւ օգտակար գործերի ճշմարիտ եւ մնայուն փառքն ու մեծութիւնը, որոնք ուրիշ բոլոր փառքերից եւ մեծութիւններից աւելի յաւերժական եւ մշտնջենական են եւ որոնք անվերջ փայլունութեամբ պէտք է շողշողան սերունդէ սերունդ եւ դարէ ի դար:

Գիտեմ, որ շատերը պէտք է գոչեն. «Ա՜հ, երանի՛թէ կարողանայինք բարերարական մեծ գործեր կատարել, բայց ի՞նչ արած, որ այժմ անձուկ վիճակի մէջ լինելով գրեթէ ոչինչ կարող ենք անել մեր անձնական եւ ընտանեկան նեղ շրջանակից դուրս»: Հարցնում եմ այդպիսիներին, գէթ շա՛տ փոքր ծառայութիւն անգամ չե՞ն կարող անել իրենց նման ընկեր արարածների եւ իրենց ազգի ու հայրենիքի լուսաւորութեան եւ յառաջադիմութեան համար: Կատարենք ամեն մէկս մեզ ընկած պարտքի փոքրիկ մի բաժինը, եւ ժամանակը պէտք է վերցնէ այն իր ծոցի մէջ եւ արդիւնաւորէ առաւել քան կարող ենք երեւակայել:

Ի՞նչ էք կարծում, ինչպէս են յօրինուած բարձրակատար լեռնագագաթներից շատերը, հսկաների՞ զօրութեամբ արդեօք, ո՛չ, նրանք բուրգեր են, անհունապէս աւելի գերազանց քան եգիպտական բուրգերը, բայց կառուցուած ո՛չ մեծազօր փարաւոններից, այլ չնչին, փոքրիկ կենդանիներից, որոնց անցեալ սերունդները այնտեղ թողնելով իրենց փոքրիկ անտեսանելի պատեանները, կուտակմամբ կազմել են այդ ահագին լեռնային զանգուածները: Որչա՜փ անհաւատալի է թւում, երբ մանրացոյցով դիտում են այդ աննշան էակները եւ ապա մի ակնարկ ձգում ժայռոտ եւ վիթխարի լեռների վրայ, բայց գիտութիւնը հաստատում է այդ իրողութիւնը:

Ուրեմն ով զգում է անցեալ, ներկայ եւ ապագայ ժամանակների զարմանալի կապակցութիւնը, չի կարող չը զգալ գործելու մեծ պարտաւորութիւնը եւ ոչ էլ մի որեւ է բարի եւ օգտակար գործ կ'արհամարէ նրա փոքրութեան պատճառով:

Ապա ուրեմն այս Նոր տարին յարմար ժամանակ չէ՞ արդեօք աչքի անցնելու մեր կեանքի նկարագիրը, ուղղելու մեր թերութիւնները եւ ամեն կերպ աշխատել օգտակար դարձնելու մեզ մեր նմանների համար: Փոյթ չէ, որքան էլ հասակն առած եւ տարիքով լինի մարդ, դեռ ուշ չէ սովորել կեանքի դպրոցի մէջ եւ ունենալ ազնիւ ձգտումներ ոչ թէ մեր արկղները միայն լցնելու հարստութեամբ աշխարհիս բարիքները աւելի ունենալ աշխատելով, թէպէտ այդ բոլորն էլ ունենալու համար կարող ենք աշխատել միայն այն սկզբունքով, որ որքան շատ լինի հարստութիւնը, այնքան աւելի մեծ լինին բարի եւ հանրօգուտ գործերը. «որին շատ է տրուած, շատ էլ պահանջում է նրանից» – ասում է Փրկիչը:

Կարող է ամեն մարդ ունենալ իր փառաւոր բնակարանը եւ եթէ կացութիւնն ու միջոցները ներում են, թո՛ղ իր բնակարանը կառուցանէ շքեղապէս, թո՛ղ գեղեցկացնէ այն գեղարուեստի նրբին ճաշակով, թո՛ղ ունենայ իր ընդարձակ դահլիճները եւ ճոխ ընդունարաններն ու առնձնասենեակները իրենց շքեղ կահաւորութեամբ, բայց սրանք ունենալով հանդերձ յիշէ իր ազգը եւ միշտ իր աչքի առաջ ունենայ իր ծննդավայրի՝ իր հայրենիքի թշուառ ժողովուրդը եւ նրա նիւթական տագնապի մէջ տառապող կրթական ու բարենպատակ հաստատութիւնները, եւ ահա այն ժամանակ մարդիկ հաճութեամբ պէտք է նայեն նրա բնակարանին՝ գովելով նրա ճաշակի նրբութիւնը:

Չը մոռանանք նաեւ մի ուրիշ պարտականութիւն՝ յառաջադիմութեան պարտականու-

թինը, որ մասնաւորապէս դնում է ամեն մինիս վերայ արագընթաց ժամանակ: Բոլոր արարչութեան լեզուն է՝ յառա՛ջ, յառա՛ջ: Ամբողջ տիեզերքը իր անտեսանելի մասների ներքեւ մի, թէեւ լռին, բայց քաղցրալուր համերգ ունի, որի յանգերգն է՝ յառա՛ջ, յառա՛ջ: Եղանակները կրկնում են նոյնը, եւ ժամանակը հոչակում է այն դարէ ի դար եւ աշխարհէ աշխարհ: Ամեն ինչ յառաջադիմում է. բնութիւնը, պատմութիւնը եւ քաղաքակրթութիւնը վկայում են այս ճշմարտութիւնը: Յառաջադիմութեան այս ամեն ձայների եւ տիեզերական բոլոր շարժումների մէջ ոչ ոք չի կարող դադարեալ եւ անգործ մնալ:

Գնահատենք ուրեմն այսօրուան մէջ ապրելու մեծ արժէքը եւ ներկայի կարեւորութիւնը՝ պտղաբեր դարձնելու մեր կեանքը: Իմաստուն մարդը եւ ժողովուրդը նա է, որ գիտէ այսօրուան արժէքը, եւ նա, որ ընդունակ է գնահատելու ներկան ըստ արժանւոյն, ապագայի համար կարող է ապահով լինել, որովհետեւ ապագայի ամբողջ արժէքը կախումն ունի այսօրուան մեր տուած արժէքից: Գալիք տարիների եւ դարերի մէջ կախարդանք, հմայք եւ հրաշք չը կայ, եւ ապագայի գեղեցիկ արտերի մէջ չի կարող ոչ մի լաւ բան բուսնել եւ ծաղկել, եթէ մենք այսօր չը սերմանենք:

Քրիստոնէութեան նպատակն էլ նոյն իսկ միայն այն չէ, որ սովորենք ապագայ փառքը, այլ որ սովորենք նաեւ նուիրականութիւնը, եւ կարեւորութիւնն ու մեծութիւնը այն կեանքի, որ այժմ մեր ձեռքին է: Բաւական չէ միայն երեւակայել երկնքի գեղեցկութիւնը, այլ ըմբռնել նաեւ, թէ երկիրս էլ Աստուածային է: Մարդավայել կեանքի գաղտնիքին տիրացողը նա է, որ սովորել է ներկայ վայրկեանի արժէքը, տեսնում է իրեն շրջապատող ներկայի գեղեցկութիւնը եւ իր շուրջը եղողներին բարձրացնելու եւ ազնուացնելու մեծ կարեւորութիւնը: Եւ եթէ մենք սովորենք ամենալաւ կերպով գործածել ներկան, թէ իբրեւ անհատ եւ թէ իբրեւ ժողովուրդ կարող ենք ապագայի բարութիւնների տէր լինել, որովհետեւ մեզանից դուրս ապագայ չը կայ, այլ մեր մէջն է նա, եւ մենք ենք պատրաստում նրան մեզ համար:

Որոշենք ուրեմն յառաջադիմել այս Նոր տարուայ մէջ դէպի բարձրագոյն եւ լաւագոյն կեանքը:

Արհեստաւորը թո՛ղ սովորի աւելի լաւ աշխատել եւ կատարելագործուել իր արհեստի մէջ:

Վաճառականը թո՛ղ ջանայ ընդարձակել իր առեւտուրը եւ աւելի շահաւէտ դարձնել իր առեւտրական ասպարէզը միայն առանց զրկանքի եւ խաբեութեան չափաւոր սահմանների մէջ դնելով իր վաստակը:

Ուսանողը թո՛ղ մի աստիճան եւս վեր ելնէ գիտութեան սանդուղքով աւելի մօտենալու գիտութիւնների անսպառ աղբիւրին, հրճուելու նրա զարմանահրաշ գործերով:

Ուսուցիչը թո՛ղ խնամք տանէ աւելի լաւ ձեւակերպելու այն բանական մարմարիոնը, որ ունի իր ձեռքին դպրոցի նուիրական յարկի տակ, օգտակար անդամ դարձնելու նրան մարդկութեան, իր ազգի եւ իր հայրենիքի համար:

Հայ քահանան թող հետամուտ լինի կարդալու, հմտանալու, զարգանալու եւ քարոզելու համար նոր տեսակէտներ, նոր գաղափարներ եւ նոր հորիզոններ մտցնելու քրիստոնէութեան եւ բարոյականութեան վսեմագոյն սկզբունքների բացատրութեան մէջ, գրաւելու ոչ միայն հաւատացեալների խիտ բազմութիւն, այլ նաեւ անտարբերների եւ թերուս թերահաւատների:

Եւ որ առաւելն է հայ մեծատունը թող սիրէ իր ազգը, սիրէ նրա մանուկ սերունդը, սիրէ

իր ազգի հէգ եւ թշուառ փառապեալները եւ նրանց ուսման ու կրթութեան կարօտ երկսեռ զաւակները եւ իր ազգի բարօրութեան եւ նորագոյն սերունդի կրթութեան եւ դաստիարակութեան ամենակարեւոր գործի համար նուիրէ ոչ միայն իր ոսկիները առատօրէն, այլ եւ իր սիրտը ամբողջովին, մանաւանդ դարաբաղցի հայ մեծատունը, որի հայրենիքը անհամեմատ աւելի փառապում է թշուառութեան եւ չքաւորութեան ճիրաններում եւ որի հայրենակիցները անկարող են, չասեմ աւելացնել, այլ նոյն իսկ պահել իրենց ուսման եւ գիտութեան մէջ ընդունակ մանուկ սերունդի կրթական մեծ եւ նուիրական գործին ծառայող, բայց նիւթականապէս բոլորովին անապահով հաստատութիւնները:

Թո՛ղ ուրեմն ժամանակի եւ յաւիտենականութեան Տէրն ու Իշխանը յառաջ մղէ բոլորիս դէպի բարի եւ օգտակար գործը այս Նոր տարուայ արագընթաց թեւերով, յառա՛ջ դէպի վեր, դէպի գեղեցիկն ու վսեմը, յառա՛ջ ժամանակի ամբողջ արագութեամբ եւ քաղաքակրթութեան բոլոր ուժգնութեամբ դէպի հանրօգուտ գործերի եւ լուսաւորութեան ասպարէզը:

Ղարաբաղի Հայոց թեմի առաջնորդ՝ ԱՇՈՏ ԵՊԻՄԿՈՊՈՍ

2-ին յունուար, 1909 թ., Շուշի

Հիմք՝ ՀԱԱ, ֆ.56, ց.14, գ.236, թ.24-25: